

ՌՈՄԱՆՈՍ ԼԱԿԱՊԵՆՈՍ ԿԱՅՍԵՐ ԱՆՀԱՅՏ ՀԱՍՑԵԱՏԵՐԸ

Կ. Ն. ՅՈՒՋՐԱՇՅԱՆ (Լեհիեզրադ)

1882—1883 թթ. հուլյն բանասեր Ի. Սակկելիոնը հրապարակեց բյուզանդական կայսր Ռոմանոս Լակապենոսի (919—944) մի շարք թղթեր, որոնք պահպանվել են Պատմոսի գրադարանի № 706 ձեռագրում (արտագրվել է մինչև 1079 թ.): Թղթերը ուղղված են եղել կայսեր անունից, սակայն դրանց իսկական հեղինակն է Թեոդորոս Դաֆնոպատեսը, որն ապրել է X դ. առաջին կեսում: Դաֆնոպատեսը հայտնի է որպես պատմիչ և աստվածաբան, կրել է պատրիկի տիտղոս և վարել պրոտասիկրիտի պաշտոն¹: Թղթերից մեկը, որը դրադեցնում է ձեռագրի 342ա—344բ թերթերը, ուղղված է Եգիպտոսի անանուն մի ամիրայի²: Առաջին գիտնականը, որը փորձեց իմաստավորել այդ նամակը, Ա. Ա. Վասիլեն էր: Նա հտնում էր, որ թղթի հասցեատերը եգիպտական ամիրա Իլշիդն է եղել, որը համալայան ամիրա Սայֆ ադ-Դաուլայի դեմ մղված պայքարում ակամայից դարձավ Ռոմանոս կայսեր դաշնակիցը: Մայր նամակը,— գրում է Ա. Վասիլեն,— զարմանք է առաջացնում: Սայֆ ադ-Դաուլայի դեմ ընդհանուր գործողությունների նկատառումով եգիպտացի ամիրային ուղղված բարեկամ ու դաշնակից դառնալու առաջարկից բացի, այստեղ արտահայտված է անսպասելի մի միտք, այն է՝ Ռոմանոսը համոզում է եգիպտական ամիրային լինել կայսրության վասալ, առաջարկն, անշուշտ, քողարկելով բազմապիսի պատվավոր պարգևների խոստումներով: Վերջին պայմանին Իլշիդը, իհարկե, երբեք չէր համաձայնի, սակայն բարեկամության առաջարկին,— պնդում է Ա. Վասիլեն,— նա պատասխանեց բավականին հոժարությամբ: Ռոմանոս Լակապենոսը չապրեց մինչև այդ ժամանակը³:

Ֆ. Դյուլգերը ուշադրություն դարձրեց նամակում հիշատակված «Կակիկիոս» և «Ապասիկիոս» անունների վրա և իրավացիորեն որոշեց նրանց կրողներին որպես Վասպուրականի թագավոր Գագիկ Ա Արծրունի և Շիրակի թագավոր Աբաս Ա Բագրատունի, որոնք եգիպտական որևէ ամիրայի հետ ոչնչով չեն առնչվում: Ֆ. Դյուլգերը ենթադրեց, որ թուղթը ուղղված է արևելյան ինչ-որ ամիրայի, ժամանակը որոշելով մինչև 936 թ. (այսպես թվագրելով Դագիկ Ա մահը)⁴: Հետագայում Ֆ. Դյուլգերը բազմիցս օգտագործեց այդ նամակը Բյու-

¹ Ձեռագրի, նամականու բովանդակության և նրա բուն հեղինակի մասին տեսնել Auber-van Cauwenbergh, Dictionnaire d'Histoire et de Geographie Ecclesiastique, fasc. 78, 1957, col. 80—82 (J. Darrouzes, *Ինձ անմատչելի*), J. Darrouzes, Un recueil épistolaire byzantin: Le manuscrit de Patmos 706.—Revue des Etudes Byzantines, 14, 1956; O. Carls-son, Ideologie et cérémonial dans l'épistolographie byzantine, Upsala, p. 12. Այս աշխատություններում նշված է նաև հին զբաղաւնությունը:

² Δελτίον της ιστορικής και εθνολογικής εταιρείας της Ελλάδος, II, 1885, σελ. 406—409.

³ А. Васильев, Византия и арабы. Политические отношения Византии и арабов за время Македонской династии, СПб, 1902, стр. 264—265.

⁴ F. Dölger, Regesten der Kaiserurkunden des oströmischen Reiches, I, №№ 630, 631.

ղանդիայի միջազգային հարաբերություններին նվիրված իր ուսումնասիրություններում: Այնուհետև մի շարք գիտնականներ ցույց տվեցին, որ թղթերի ինսկրիպցիաներն արտագրելիս գրիչները հաճախ սխալվում են, և խնդրո առարկա նամակը ուղղված է եղել հայ իշխաններից մեկին: Այդ կարծիքը կիսեց նաև Ֆ. Դյուլգերը⁵: Ա. Վասիլևի «Բյուզանդիան և արաբները» գրքի ֆրանսերեն թարգմանության մեջ ասված է, որ սույն թուղթը, ըստ երևույթին, ուղղված է ինչ-որ հայ իշխանի (գրքի ռուսերեն բնագրում այդ չկա), իսկ հատուկ հավելվածում Մ. Քանարը վերլուծում է այդ նամակը և հայտնում, թե հասցեատերը մահմեդական մի ամիրա կարող է լինել՝ հավանաբար համդանյան Նասիր ադ-Դաուլան (935 և 938 թթ. դեպքերի կապակցությամբ, երբ նրան դուրս են անում Մոսուլից) կամ Ադրեքանի քուրդ ամիրա Դայսամ իբն Իբրահիմը (մոտավորապես 941—942 թթ.)⁶, Նորագույն գրականության մեջ ևս կարծիք կա, որ հասցեատերը, ինչպես և նշվում է վերնագրում, իրոք եգիպտական մի ամիրա է⁷:

Նշած տարակարծությունները պահանջում են մեկ անգամ ևս դիմել այդ առեղծվածային թղթին, պարզելու նրա հասցեատիրոջ անձնավորության կերպարը: «Եգիպտոսի ամիրայի» անունով կազմված նամակը ունի ընդարձակ նախաբան, ուր հռետորական ոճով փառաբանվում են խաղաղությունն ու սերը: Այնուհետև նամակագիրը դիմում է հասցեատիրոջը. «Ելնելով դրանից և լսելով շատերից, որ քո փայլուն ազնվազարմությունը խոհեմությամբ, խելամուռությամբ և բարության գերազանցում է քեզից առաջ իշխողներին, որոշեցինք, որ դու ևս ճաշակես մեր սիրուց և իմանաս թե ինչպիսի ցնծությունից եմ զրկված եղել՝ միայն վերջերս ծանոթ դառնալով մեր կայսրությանը: Ցանկանալով, ինչպես ասվեց, գործնական եղանակով բացահայտել այդ, մենք որոշ ժամանակ առաջ մեր նամակներով սպաթարոհանդիսատես և պոռթսիմոս Կոստանդինին ուղարկեցինք իշխանաց իշխան» (ἀρχαῖς τῶν ἀρχόντων) Կակիկիոսի մոտ, որպեսզի նա հավատարմություն տաժելով, նրան (Կոստանդինին) այնտեղից ուղարկի ձեր ազնվազարմության մոտ, բայց ինչ-որ խոչընդոտ առաջացավ և Կոստանդինը տեղ չհասավ: Այժմ, չհանդուրժելով, որ ձեր սերն ու խոհեմությունը այդ կերպ տուժի, վերջերս մեր կայսրության կողմից ուղարկեցինք մի գրություն ձեր ազնվազարմությանը⁸, որպեսզի ճանաչես, թե ինչպես է մեր բարությունը տարածվում ամեն ինչի վրա: Քանզի եթե անձամբ ճանաչես, իմացած լինես կատարյալ ձևով և մյուսներից լսես հոռոմների կայսրության վեհության ու վսեմության մասին, որն աշխարհիս բոլոր իշխանություններից զորեղն է ու հզորը, և որքան լի է այն աշխարհիս հարստություններով ու բարիքներով՝ կգովաբանես մեծապես կապված լինելով բարեկամությամբ (ὁὐδ' ὀλίγον) այդպիսի մեծագույն և փառավորագույն կայսրությանը: Եվ եթե

⁵ F. Dölger, Byzanz und die europäische Staatenwelt. Ettal, 1953, S. 39, n. (այստեղ նշված է նաև գրականությունը):

⁶ A. Vasiliev, Byzance et les Arabes, II, 1, édition française préparée par M. Canard, Paris, 1968, p. 289—290, 425—430.

⁷ L. Brehier, Les institutions de l'empire byzantin, Paris, 1970, p. 238.

⁸ Թեև բնագրում կիրառված է «ուղարկել» բայի անցյալ կատարյալը և «վերջերս» (ἀρχαίως) մակբայը, սակայն խոսքն, ըստ երևույթին, ոչ թե մի ուրիշ գրության, այլ պարզապես խնդրո առարկա նամակի մասին է:

քո հանդեպ նպատակադիր լինես, որպեսզի դառնաս մեր կայսրության բարեկամը (ὁμοῖα τῆς ἡμετέρας γενεῖαι βέλτερος), ապա հայտնիր մեզ քո հավատարիմ ու ղործունյա մարդու միջոցով՝ ներքուստ ինչպիսի սեր ունես մեր նկատմամբ, որպեսզի և մենք դրանով ավելի համոզվենք ձեր նպատակների վերաբերմամբ: Եվ եթե առհասարակ ցանկանում ես և՛ լինել, և՛ անվաճվել մեր բարեկամը, եթե հաճելի համարես մնալ նույն այդ վայրում⁹, մենք կշնորհենք քեզ իշխանաց իշխանի պատիվ և կհրամայենք Գագիկին և մագիստրոս Աբասիկին և մյուս իշխաններին, որոնք բնակվում են նույն այդ վայրերում, հպատակվել քո խոսքին և վճռին: Իսկ եթե գերադասես ներկայանալ մեր կայսերականությանը և մեզ հետ մնալ աստվածապաշտ քաղաքում, մենք կընդունենք քեզ փայլուն և պատվավոր կերպով և կշնորհենք քեզ պատրիկի, անթիպատի և ստրատիգոսի պատիվ ցանկացած բանակաթեմում: Կտրամադրենք քեզ և՛ տուն, և՛ կալվածներ, և՛ հարստություն՝ ոսկի, արծաթ ու մետաքսյա զգեստներ, որպեսզի փառաբանվես աշխարհիս բոլոր մարդկանց կողմից և ստանաս մեր զորեղությունից այլ անթիվ բարիքներ:

Արդ, մենք սիրով պատասխանելով քո սիրուն, բացահայտեցինք մեր նըպատակը, իսկ դու ինչպես կկամենաս՝ պատասխանիր մեզ գրով՝ հավատարիմ և զործունյա մարդու միջոցով: Առհասարակ ես գիտեմ, որ խոհեմ լինելով, դու կգերադասես լավագույնը և փրկարարը և չես ցանկանա հակառակ ուղի բռնել և ընտրել ջարդն ու պատերազմը, որոնք սպասածից ավելի դժբախտություններ են բերում, այլ ծարավ կլինես խաղաղությանը, փառքի և հաջողությանը՝ ինչպես Աստծու, այնպես և մարդկանց առջև¹⁰:

Այսպիսով սույն նամակից պարզվում է հետևյալը.

ա) հասցեատերը միայն նորերս է ծանոթ դարձել կայսրին.

բ) ունենալով ձեռքին մի գրություն, հասցեատիրոջ մոտ ուղարկված է եղել սպաթարոկանդիտատ՝ և պոքսիմոս Կոստանդինը, բայց հասել է միայն մինչև «Իշխանաց իշխան» Գագիկը և ինչ-որ պատճառով հետ դարձել:

գ) այժմ կայսրը, մերձեցման նոր փորձ կատարելով, մի այլ թուղթ է հղում նույն հասցեով:

դ) թղթում ասված է՝ եթե հասցեատերը ցանկություն հայտնի դառնալու կայսեր «բարեկամը», ապա նրան կշնորհվի «Իշխանաց իշխան» տիտղոսը, իսկ Գագիկին, Աբասիկ մագիստրոսին և մյուս իշխաններին հրաման կտրվի ամեն ինչում հպատակվել նրան:

ե) իսկ եթե հասցեատերը գերադասի ժամանել Կոստանդնուպոլիս, ապա նա կարժանանա փառավոր ընդունելության, կստանա պատրիկի ու անթիպատի տիտղոսներ, կդառնա ցանկացած բանակաթեմի ստրատիգոս, նրան կտրամադրվեն տուն և կալվածներ, նա ձեռք կբերի հարստություն՝ ոսկի, արծաթ և մետաքսյա զգեստներ:

զ) հասցեատերը արդեն վկայել է իր սերը կայսեր նկատմամբ, այժմ սպասվում է, որ նա մեկի միջոցով ուղարկի սույն թղթի գրավոր պատասխանը:

⁹ ἐν τοῖς μερεσιν αὐτοῖς, նույն դարձվածքը հանդիպում է նաև ստորև. Մ. Քանարը թարգմանում է «մեր (այսինքն՝ կայսեր) տարածություններում»:

¹⁰ Հմմտ. ռուսերեն և ֆրանսերեն թարգմանությունները՝ Васильев, укр. соч., стр. 264—265; Vasiliev-Canard, op. cit, p. 425—427.

Նախքան թղթի բովանդակության վերլուծությանն անցնելը, փորձենք թվագրել այն: Նամակի հեղինակ Ռոմանոս կակապենոս կայսեր գահակալության տարիներն են 919—944 թթ.: Հնարավոր է, սակայն, այդ ժամանակահատվածը ավելի սահմանափակել: Թղթում հիշատակված «իշխանաց իշխան» Գագիկը նույն ինքը Վասպուրականի թագավոր Գագիկ Ա Արծրունին է, իսկ մագիստրոս Աբասիկը՝ Արաս Ա Բագրատունին՝ երկուսն էլ Ռոմանոս կայսեր ժամանակակիցներ: Եվ իրոք, Գագիկ թագավորը անվան նույն ձևով հիշվում է նաև Կոստանդին Միրանածինի մոտ: Իր «Կայսրության կառավարման մասին» աշխատության մեջ նա հիշատակում է Գագիկին որպես «իշխան» (αρχων), մի այլ տեղում Վասպուրականի թագավորը հանդես է գալիս պարզապես վասպուրականցի, իսկ «Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին» գրքում ասված է՝ «Ասպուրականի, այն է՝ Վասպուրականի իշխան, որ այժմ իշխանաց իշխանի պատիվն է ստացել»¹¹, Կոստանդին Միրանածինը հիշատակում է նաև Արաս Բագրատունուն: Քննական բնագրում նա հանդես է գալիս 'Απαρχιος անվան տակ, սակայն նախընտրելի է տարրնթերցումների 'Απαρχιος ձևը (սեռ. հոլովով՝ 'Απαρχιον), որը հաստատվում է և Ռոմանոս կայսեր նամակով¹², Կոստանդին Միրանածինի մոտ, ինչպես և նամակում, Աբասը լոկ մագիստրոս է:

Արաս Բագրատունին զահ է բարձրացել 929 թ.¹³ և իշխել է մինչև 953 թ.: Գագիկ Արծրունին սկսել է թագավորել 908 թ. և վախճանվել է 943 թ.: Գրականության մեջ տարածված է այն կարծիքը, որ Գագիկը իր մահկանացուն կնքել է 936 կամ 937 թթ.¹⁴, Թովմա Արծրունու շարունակողը այդ թվականներին սկսած՝ իրոք լուր է Գագիկի մասին, սակայն ըստ արաբական հեղինակների՝ Գագիկը ողջ էր տակավին 939—40 և 941—42 թթ.¹⁵, Ասողիկը, որի տրվյալները սովորաբար ճշգրիտ են, կազմել է Արծրունիների ժամանակագրական աղյուսակը, որի համաձայն Գագիկը գահակալել է 29 տարի, մինչև 943 թ.: Այդ հաշվառման համաձայն՝ Գագիկը, ճիշտ է, թագավոր է համարվում միայն 914 թ., բայց դա, ըստ երևույթին, ոչ թե վրիպում է, այլ համոզմունք: Ինչպես պարզում է Վ. Վարդանյանը, իսկապես որոշ հիմք է հղել Արծրունյաց թագավորության սկիզբը հաշվել ոչ թե 908, այլ 914 թ.¹⁶, Այդ հաշվումներից ելնելով,

¹¹ Constantine Porphyrogenitus. De administrando imperio. Greek text edited by Gy. Moravcsik, english translation by R. J. H. Jenkins. Washington, 1967, 43/111, 130 (այսուհետև՝ DAI I); Constantini Porphyrogeniti Imperatoris De caerimoniis aulae byzantinae. I, Bonnae, 1829, p. 687. 4—5 (այսուհետև՝ DAI II); Կոստանդին Միրանածին, Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 7, 15, 151:

¹² DAI I, 44/9, 38: Կոստանդին Միրանածին, էջ 10, 11, 225, ծան. 15. այստեղ Հ. Բարթիկյանը ճշտում է մտցնում անվան գրության մեջ:

¹³ «Ստեփանոսի Տարսեղցույ Ասողկան Պատմութիւն տիեզերական» [հրատ. Ստ. Մալխասյանց], Ս. Պետերբուրգ, 1885, էջ 170—171:

¹⁴ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942, էջ 431—432, № 16; R. Grousset, Histoire de l'Arménie, Paris, 1947, p. 456, 643.

¹⁵ M. Canard, Histoire de la dynastie des Hamdanides de Jasira et de Syrie. I, Alger, 1951, p. 469, n. 214.

¹⁶ Վ. Վարդանյան, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը, Երևան, 1969, էջ 115—117:

կարելի է պնդել, թե բյուզանդական կայսեր նամակը, որը ժամանակակից է և Արաս Բագրատունուն և Գագիկ Արծրունուն, գրվել է 929 (Աբասի գահ բարձրանալը) և 943 (Գագիկի մահը) թվականների արանքում:

Արդ՝ ի՞նչ միջավայրից էր քննվող դրության հասցեատերը: Որոշիչ հանգամանք է նրա «իշխանաց իշխան» տիտղոսը: Հայտնի է, որ երկար ժամանակ այդ տիտղոսը կրել են Բագրատունիները: «Կայսրության կառավարման մասին» աշխատության մեջ իշխանաց իշխան են Աշոտ Ա¹⁷, Սմբատ Ա¹⁸, Աշոտ Բ¹⁹ Բագրատունիները: Այդ տիտղոսը ընդհանրապես հատուկ է Բագրատունիներին²⁰, Պահպանվել է պատրիարք Նիկողայոս Միստիկոսի թուղթը՝ ուղղված «իշխանաց իշխանին»՝ Սմբատ Ա կամ Աշոտ Երկաթին²¹, Կոստանդնուպոլիս ժամանած Աշոտ Երկաթին բյուզանդական պատմիչները հորջորջում են իշխանաց իշխանի որդի²²: «Արարողութունների մասին» գրքի մի գլուխը փաստորեն պաշտոնական գրություններ կազմելու հրահանգ է: Այստեղ ևս հիշատակվում է Մեծ Հայքի իշխանաց իշխանը, սակայն պաշտոնական նամակի առաջին տողերում բառացի մեջբերված բանաձևից պարզվում է, որ նույն այդ իշխանաց իշխանը պաշտոնապես անվանվել է ԱՊՈՒՄ (առաջին», «առաջնորդ»)՝²³ Ըստ երևույթին, ժամանակին փոփոխություն է կատարվել, և «Մեծ Հայքի», այն է՝ Շիրակի թագավորը ստացել է պոռտի տիտղոս: Պետք է նկատել, որ ինչպես իշխանաց իշխանը, այնպես և պոռտը արձանագրված են այն տիտղոսների ցանկում, որոնք տրվում էին օտարազգի պետերին²⁴:

Վասպուրականի թագավորի («իշխանի») մասին ասվում է, որ նա այժմ իշխանաց իշխանի տիտղոս է ստացել²⁵:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, սույն տիտղոսի մեզ հայտնի բոլոր կրողները ճայատալանցի թագավորներ են, Բագրատունի կամ Արծրունի: Հիմք չկա ենթադրելու, որ բյուզանդական արքունիքը խախտելով ավանդույթը, ինչպես նաև հատուկ կարգը, այդ տիտղոսը շնորհեր ոչ հայաստանցուն: Ռոմանոս Լակապենոսի նամակի հասցեատերը ևս հայաստանցի է, հայ իշխան, որին կայսրը մի շարք շոյիչ առաջարկներ է անում: Բայց ո՞վ էր այդ իշխանը, որը բյուզանդական քաղաքագետների ծրագրով պիտի այդպիսի թռիչք կատարեր և հնարավորություն ստանար հետ թողնել ինչպես «Մեծ Հայքի», այնպես և Վասպուրականի թագավորին: Արդյո՞ք դա տարոնեցի Գրիգոր Բագրատունին չէր, որը այդ շրջանում սերտ և բարդ կապեր էր հաստատել Բյուզանդիայի հետ: X դ. առաջին կեսի Տարոնի պատմության հիմնական գրավոր աղբյուրը «Կայսրության կառավարման մասին» երկի 43-րդ գլուխն է²⁶: Այստեղից պարզվում

¹⁷ DAI I, 44/6, 13, 18, 20.

¹⁸ DAI I, 43/30, 33—4, 44/7, 19, 22, 26—7, 50, 120.

¹⁹ DAI I, 43/112, 44/9, 37.

²⁰ DAI I, 44/38—9, 42, 45.

²¹ Հ. Մ. Բարթիկյան, Կոստանդնուպոլսի պատրիարք, Նիկողայոս Միստիկոսի 101-րդ և 139-րդ թղթերը՝ ուղղված Հովհաննես Գրասխանակերտցուն և Սմբատ Ա թագավորին («Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 4):

²² N. Adontz, Asot Erkat' ou de Fer, roi d'Arménie.—Etudes armeno-byzantines, Lisbonne, 1965, p. 265.

²³ De cer., p. 686. 22—687. 3.

²⁴ De cer., p. 679. 4—5, 7.

²⁵ Ման. 11.

²⁶ DAI I, p. 188—189, անգլերեն զուգահեռ թարգմանությամբ նյութի վերլուծությունը՝ Constantine Porphyrogenitus. De Administrando Imperio. II, Commentary, by F.

է, որ Գրիգորի մոտ է ժամանել կայսեր պատգամավոր Լիվոսի որդի Կոստանդինը՝ պրոտոսպաթար, հյուպուրգիայի դամեստիկոս, այժմյան անթիպատ պատրիկ և մեծ ֆեոտերիարխ, թվարկում է նրա տիտղոսները Միրանաթինը²⁷։ Կոստանդինը հանձնում է Գրիգորին ընծաներ ու նամակ։ Կոստանդինը մի քանի անգամ ևս առիթ է ունենում պաշտոնական հանձնարարությամբ այցելելու Տարոն։ Գրիգորի եղբայր Ապոգանեմը հետագայում փեսայանում է այդ Կոստանդինին, կնության առնելով նրա դստերը։ Նույն Կոստանդինի ուղեկցությամբ՝ մայրաքաղաք է ժամանում Գրիգոր Տարոնեցին, այստեղ նա ստանում է մագիստրոսի և Տարոնի ստրատիգոսի տիտղոսներ, բնակության համար նրան հատկացվում է Բարբարոսի կոչեցյալ «տունը», նա ստանում է մի շարք արտոնություններ ևս։ Հետագայում Գրիգորին հաջողվում է այդ տունը փոխանակել Եկեղիքում գտնվող մի կալվածի հետ։ Ինչպես տեսնում ենք, Միրանաթինի նկարագրած դեպքերը, կարևոր պատվիրակի անունը, տերմինաբանությունը մերձավորապես նմանվում են նամակի մեջ արտահայտվածին։ Առաջին հայացքից կարող է թվալ, որ հասցեատերը նույն Գրիգոր Տարոնեցին է։ Սակայն այդ գայթակղիչ եզրակացությունը մերժելի է։ Որքան էլ հակասական լինեն Միրանաթինի տվյալները կայսեր պատվիրակի մասին, չի կարելի չնկատել, որ Լևոն Զ (886—912) ժամանակ Տարոն եկած Կոստանդինը պրոտոսպաթար է, իսկ Ռոմանոս Լակապենոսի պատգամաբերը՝ սպաթարեպեղիտատ, այսինքն նամակի Կոստանդինի տիտղոսը ավելի ցածր է, քան նրա անվանակցինը։ Նամակի հասցեատիրոջ առջև հնարավորություն է բացվում դառնալու ուղածո թեմի ստրատիգոս, իսկ Գրիգորի մասին հայտնի է, որ նա իրոք արժանացավ Տարոնի ստրատիգոսի տիտղոսին։ Սակայն եթե առաջին դեպքում խոսքը սովորական թեմի սովորական կառավարչի մասին է, ապա Գրիգորի օրինակը այլ է։ Տարոնը կմիացվի Բյուզանդիային և կդառնա բյուզանդական թեմ միայն 966 թ., իսկ առայժմ դա կայսրության կազմի մեջ չի մտնում։ Գրիգորի ստրատիգոս տիտղոսը լոկ պատվական բնույթ է կրում, այն չի կապվում իշխանի վարչական իրավունքների հետ՝ իր իսկ հպատակների նկատմամբ։ Եվ վերջապես, Գրիգոր Տարոնեցին հայտնի է դառնում կայսրությանն արդեն X դ. սկզբին, մինչդեռ մեր նամակի հասցեատերը 929—943 թթ. միայն նստեց է ժանոթ դառնում Ռոմանոս կայսրին։ Այդ հանգամանքը առաջ է բերում Մ. Քանարը, որը ևս մերժում է Գրիգոր Տարոնեցու թեկնածությունը որպես գրության հնարավոր հասցեատիրոջ²⁸։

Վերևում հիշատակված պաշտոնական գրությունների հրահանգում Տարոնից բացի, հիշատակվում են մի շարք այլ հայ իշխանություններ, որոնց տերերը նամակագրական կապի մեջ են եղել հռոմեական կայսեր հետ և ստացել վերջինիս հրամանները։ Դրանք են՝ Կոզովիտը, Մոկսը, Անձևացյաց աշխարհը, Սյունիքը, Վայոց ձորը, Խաչենը, Սևորդիքը²⁹։ Այդ ցուցակը խմբագրվել է 944—

Dvornik etc, London, 1962, p. 159—167 (ստորև՝ DAI II); N. Adontz, Les Taronites en Armenie et à Byzance, Etudes armeno-byzantines ժողովածուում, Կոստանդին Միրանաթին, էջ 210—213. սույն գլխի հայերեն թարգմանությունը՝ էջ 4—10։

²⁷ Adontz, op. cit., p. 222—225; DAI II, p. 162—163, 43/43—5, Կոստանդին Միրանաթին, էջ 216, ծան. 19։

²⁸ Vasiliev-Canard, op. cit., p. 427.

²⁹ De cer., I, p. 687. 8—14, Կոստանդին Միրանաթին, էջ 151 և 311—312, ծան. 82—89։

959 թթ. Արդյո՞ք այդ իշխանների թվում է հարկավոր որոնել նաև քննվող նամակի հասցեատիրոջը. համենայն դեպս՝ թղթաբերը Վասպուրականից կարող էր ժամանել այդ իշխանություններից յուրաքանչյուրը: Ասկայն նման ենթադրությունները հավանական լինելով հանդերձ, մենք են շապացուցված: Աղբյուրների ներկա վիճակը թույլ չի տալիս որոշելու, թե ո՞վ է եղել կազմակերպության ղեկավարը հայաստանցի հասցեատերը:

Գաղտնի պահելով այդ իշխանի անունը, նամակը, այդուհանդերձ, կարևորագույն տվյալներ է պարունակում այն դերի մասին, որ պիտի կատարեր նա, եթե հրապուրվեր կայսեր առաջարկություններով: Այդ տվյալները լույս են սփռում հայ-բյուզանդական միջազգային հարաբերությունների բարդ պատկերի վրա:

Ինչպես հայտնի է, արաբական գերիշխանության շրջանում Հայաստանը ոչ լրիվ էր կորցրել ինքնավարության իրավունքը. հայ իշխանները պահպանել էին իրենց տիրույթներում վարչական ինչ-որ ֆունկցիաներ: Որպես միջնորդ այդ իշխանների և արաբական կառավարիչների միջև հանդես է դալիս տեղացի ազնվականներից մեկը, որը կոչվելիս է եղել Հայոց իշխան կամ իշխանաց իշխան³⁰: Հայ իշխանները հաճախակի կրում էին բյուզանդական պատրիկի տիտղոս, և այդ հանգամանքի շնորհիվ է, որ արաբները իշխանաց իշխան գաղափարը վերարտադրում էին իբրև բատրիկ ալ-բատարիկա, այն է՝ պատրիկների պատրիկ: 886 թ. Աշոտ Բագրատունին իրեն թագավոր է հռչակում, ճանաչում ստանալով ինչպես խալիֆաթի, այնպես և կայսրության կողմից: Այդ շրջանում է, որ Բյուզանդիան առաջին անգամ շնորհեց հայ թագավորին ἄρχων τῶν ὀψιγόνων տիտղոսը: Գիտության մեջ այդ տիտղոսը դիտվում է որպես Հայոց իշխանաց իշխանի և արաբական բատրիկ ալ-բատարիկայի զուգահեռ: Պետք է շեշտել միայն, որ արաբները Աշոտին իշխանաց իշխան էին անվանում նախքան վերջինիս թագավոր դառնալը, իսկ բյուզանդացիք նրան՝ ճանաչում էին արքունիքի արքունի նաև թագավոր դառնալուց հետո: Մի առումով սակայն տիտղոսակրի դերը էական փոփոխության չէր ենթարկվել: Ծիշտ այնպես, ինչպես բատրիկ ալ-բատարիկան պարտավոր էր իրացնել հայ իշխանների վրա խալիֆաթի իրավունքը, նման եղանակով և արքունիների արքունը (համենայն դեպս բյուզանդացիների աչքում) կոչված էր տարածելու նույն իշխանների վրա բյուզանդական կայսեր գերագույն իրավունքը:

Տերմինաբանությունն ինքնին հուշում է այն գաղափարը, որ բյուզանդական տեսանկյունից արքունների արքունը իշխանություն է ստանում մյուս արքունների (իմա՝ իշխանների) վրա, սակայն խնդրո առարկա գրությունն է միայն, ուր այդ միտքը արտահայտված է ամենայն պարզությամբ և աներկբայելի: «Մենք կհրամայենք,—գրում է կայսրը,—Գագիկին, Աբասիկին և մյուս իշխաններին, որոնք բնակվում են նույն այդ վայրերում՝ հպատակվել քո խոսքին և վճռին...»: Արքունների արքունի դերը կատարել են Հայաստանում, ըստ բյուզանդական սկզբնաղբյուրների, փոփոխակիորեն Աշոտ Ա, Ամբատ Ա և Աշոտ Բ թագավորները: Աբասը այդ պատվին չէր արժանացել, աղբյուրներում (ինչպես և սույն նամակում) նա հիշատակվում է որպես մագիստրոս: Մանո-

30 Հմտ. Ա. Տեր-Ղևոնդյան, «Հայոց իշխանը» արաբական տիրապետության ժամանակաշրջանում («Պատմա-քաղաքական հանդես», 1964, № 2, նաև՝ REArm., т. 3, III, 1966):

Թագրելով Կոստանդին Միրանաթինի դարձվածքը այն մասին, որ վասպուրականի իշխանը (այն է՝ Գագիկ Արծրունին) այժմ արքունների արքունի պատիվունի, Հ. Բարթեկյանը նկատում է, որ այդ «այժմը» չէր կարող ասված լինել 908 թ. շատ անց. նա գտնում է, որ շնորհելով Գագիկին արքունների արքունի տիտղոս, ըյուղանդացիք դրանով թագավորի կոչում էին տալիս նրան³¹, նըշված թվագրությունը դժվար է ընդունել: Եթե արքունների արքունը թագավորական տիտղոս էր լուկ, եթե նա արտահայտում էր թաղավորական իշխանության ճանաչումը, ապա ինչու պիտի զրկված լիներ դրանից Արասը: Կասկածաբեկ վերաբերվելով նրան³², ըյուղանդացիք, այնուամենայնիվ, ընդունում էին նրան որպես օրինավոր իշխանավոր: Արասը կրում էր մագիստրոսի տիտղոս X—XI դդ.: Ոչ մի հայ թագավոր մագիստրոսից բարձր տիտղոս չի ունեցել: Այդ հանգամանքը կարելի է բացատրել նրանով միայն, որ տվյալ պահին Հայաստանում կարող էր լինել միայն մեկ արքունների արքուն, որը և բյուզանդական պատկերացմամբ պիտի իշխանավոր հանդիսանար մյուս արքունների (այսինքն իշխանների և թագավորների) նկատմամբ: Առաջնությունը տալով Արծրունիներին, ըյուղանդացիք արքունների արքուն են ճանաչում Գագիկին, բայց այդ փոփոխությունը պիտի տեղի ունենար ոչ թե 908, այլ 929 թ. հետո, երբ վախճանվեց Աշոտ Երկաթը, Բագրատունի մեզ հայտնի վերջին արքունների արքունը:

Արքունների արքունի տիտղոսը (համապատասխանորեն և պաշտոնը) ցմահ չէր, նամակից երևում է, որ Բյուզանդիան տրամադիր էր Գագիկից էլ վերցնել այդ պաշտոնը, առաջարկելով այն սուլյն նամակի հասցեատիրոջը: Պետք է ենթադրել սակայն, որ այդ անանուն անձնավորությունը՝ ըստ կայսերական ծրագրի՝ միաժամանակ կամ ավելի շուտ՝ կանխապես պիտի դառնար նաև թագավոր: Դժվար թե արքունների արքուն տիտղոսը տրամադրվեր շարքային իշխանի: Այդ ցույց է տալիս, որ կայսեր ելույթը անհետևանք անցավ՝ 929—943 թթ.: Արաս Բագրատունուց և Գագիկ Արծրունուց բացի Հայաստանում այլ թագավոր չի եղել: Սակայն անկախ գործնական հետևանքներից, սուլյն նամակը հարազատորեն արտացոլում է և՛ կայսերական դիվանագիտության մեթոդները, և՛ Հայաստանում տիրող քաղաքական մթնոլորտը: Միասնական պետության բացակայության պայմաններում, անընդհատ պայքարելով մեկը մյուսի դեմ, հայ իշխանավորները պիտի դաշնակից և հովանավորող որոնեին նաև դրսի աշխարհում, հայացքները սեեռեին ինչպես արաբների, այնպես և բյուզանդացիների կողմը: Եվ եթե կայսեր գրության հասցեատերն արձագանքեր դիվանագիտական այդ նյութին, ապա ժամանակակիցների աչքում նրա վարմունքը չէր դիտվի որպես արտասովոր մի քայլ:

Բյուզանդիայի և հարևան պետությունների միջև հաստատվող միջազգային հարաբերություններում մեծ դեր էր կատարում մի յուրօրինակ գաղափար, որի արմատները գալիս էին հնագույն ժամանակներից: Բյուզանդական կայսրը դիտվում էր որպես արքունիքից և ժողովուրդներից կազմված խորհրդավոր գերդաստանի պարագլուխ: Գերդաստանի անդամները նրա նկատմամբ զերտնրվում էին մերձության տարբեր աստիճանների վրա, լինելով կայսեր [հո-

³¹ Կոստանդին Միրանաթին, էջ 311, ժան. 81:

³² DAI II, p. 168—169, 44/9—10.

դեոր] «հայր», «եղբայրներ», «զավակներ» և «բարեկամներ»։ Այդ խորհրդավոր ընտանիքը գործող քաղաքական հաստատություն էր, ըստ որում մերձության աստիճանը բնորոշող տերմինները միաժամանակ և իրավական տիրուղոսներ էին։ Հռոմի պապը կայսեր հոգևոր «հայրն» էր, եվրոպական մի շարք թագավորներ՝ նրան «եղբայրներ», Մեծ Հայքի (իմա՝ Բագրատունյաց թագավորության), Բուլղարիայի և Ալանքի իշխանավորները կայսեր հոգևոր որդիներն էին։ Դիմելով վրաց կյուրապաղատ Աշոտին, Կոստանդին Միրանաթինը կոչ է անում, որպեսզի նա լինի կայսեր հավատարիմ ծառան և բարեկամը³³։ Ահա այդպիսի բարեկամ պիտի դառնար նաև մեր գրքի հասցեատերը։ Կասկած չկա, սակայն, որ ընդունելով այդ տիտղոսը, նա պիտի լիներ միաժամանակ կայսեր վասալը։ Այդ տիպի կախվածության գաղափարը արտահայտում էր օտար տերմինը, որին հայերենում համապատասխանում էր ծառան։ Միջազգային հարաբերությունների բնագավառում Բյուզանդիան մերժում էր իրավահավասարության գաղափարը, պայմանագիրը պիտի ճանաչեր կայսեր գերազույն իրավունքը։ Ճիշտ է, իրականում դա կարող էր այդպես չլինել, բայց ինքը՝ գաղափարը անխախտելի էր։ Այդ առումով նամակի հասցեատիրոջը վիճակված էր նույն այն դերը, ինչ և նրա ժամանակակից Բագրատունիներին, Արծրունիներին և մի շարք իշխանների, որոնք ճանաչվում էին վասալներ և ստանում կայսեր անունից ուղարկվելիք «հրամանները»³⁴։

Այսպիսով՝ 929—943 թթ. արանքում Հայաստանում քաղաքական իրադրությունը հեղաշրջելու սցենարը մշակված էր ամենայն մանրամասնությամբ։ Կհաջողվի՞ արդյոք երբևիցե պարզել՝ ինչու այդ սցենարը չիրականացավ և ո՞վ էր նախատեսված որպես նրա զլխավոր հերոս։

НЕИЗВЕСТНЫЙ АДРЕСАТ РОМАНА ЛАКАПИНА

К. Н. ЮЗБАШЯН (Ленинград)

Резюме

Сообщение содержит перевод и критический анализ одного из посланий византийского императора Романа Лакапина (Δελτίον της ιστορικής και ἐθνολογικής ἐταιρείας της Ἑλλάδος, II, 1885, стр. 406—409). В рукописной копии послание адресовано «египетскому эмиру», но, как показал ряд исследователей, его действительным адресатом был один из армянских князей.

Послание датируется 929—943 гг. Роман Лакапин предлагает адресату стать «другом» империи и «архонтом архонтов». Оба термина принадлежат международно-правовой сфере и употребительны в IX—X вв. Титул «друг» характеризует степень близости его носителя к византийскому императору, полагавшему себя главой воображаемой «семьи правителей и народов». Институт «архонта архонтов» возник с приходом к власти Багратидов. Согласно византийским установлениям, один из армян-

³³ DAI I, 45/157.

³⁴ Ծագրություն հենք պատրաստում առանձին ուսումնասիրություն՝ նվիրված «Բագրատունյաց դարաշրջանի» միջազգային հարաբերություններին։

ских царей наделялся верховной властью по отношению к остальным правителям, «архонтам». «Архонтами архонтов» попеременно были Ашот I, Смбат I, Ашот II, после смерти Ашота II этот титул перешел к Гагику I Арцруни, а затем возникла идея сделать «архонтом архонтов» адресата послания.

Определить адресата не представляется возможным, тем не менее послание остается важным памятником для изучения международного статуса Армении в эпоху Багратидов. Послание, в частности, подтверждает точку зрения, согласно которой в Армении в данный момент мог быть только один «архонт архонтов».